**Արձանագրություն N 3**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» ապրիլի 2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

**Արման Հարությունյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄհՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկաների ընդհանուր գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Համակարգիչ ամբողջը մեկում | 11 004 000 |
| 2. | Լազերային տպիչ | 1 988 000 |
| 3. | Սկաներ համակարգչի համար | 192 000 |
| 4. | Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ | 1 132 000 |

**2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի, «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ի, «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ-ի, «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «ՄԻԿՐՈՐԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

3.1 «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «ՄԻԿՐՈՐԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

3.2 «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումի>> (Հավելված 1), որում նշված չէ հայտով առաջարկվող 3-րդ և 4-րդ չափաբաժիններում նշված ապրանքը (ապրանքները) որ երկրի արտադրության ապրանք (ապրանքներ) է (են) հանդիսանում:

3.3 «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

ա) <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումի>> (Հավելված 1), որում

-<<7.5 կետի 1-ին ենթակետով>> բառերի փոխարեն պետք է լինեն <<7.5 կետի 2-րդ ենթակետով>> բառերը,

-հստակ նշված չէ հայտով առաջարկվող որ չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքը (ապրանքները) որ երկրի արտադրության ապրանք (ապրանքներ) է (են) հանդիսանում,

բ) <<Մասնագիտական փորձառության մասին հայտարարության>> (Հավելված 3.1), որը թերի է կազմված:

3.4 «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

ա) <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումի>> (Հավելված 1), որում հստակ նշված չէ հայտով առաջարկվող որ չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքը (ապրանքները) որ երկրի արտադրության ապրանք (ապրանքներ) է (են) հանդիսանում,

բ) Հավելվածներ 1-ի, 2-ի, 3.1-ի, 3.3-ի, 3.4-ի, 3.6-ի, 4.1-ի, որոնցում կնիքները լավ չեն երևում:

3.5 «ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումի>> (Հավելված 1), որում հստակ նշված չէ հայտով առաջարկվող որ չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքը (ապրանքները) որ երկրի արտադրության ապրանք (ապրանքներ) է (են) հանդիսանում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գներն են՝

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | «ՄԻԿՐՈՐԻՆԳ» ՍՊԸ | | | | | «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | | | | «ԿՈՄ ՊԱՍՍ» ՍՊԸ | | | | | «Պ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ |
| 1 | Համակարգիչ ամբողջը մեկում | 8 600 000 | 430 000 | 9 030 000 | 1 806 000 | 10 836 000 | 8 225 000 | 700 000 | 8 925 000 | 1 785 000 | 10 710 000 | 9 886 800 | 1 348 200 | 11 235 000 | 2 247 000 | 13 482 000 | 7 339 345 | 815 480 |
| 2 | Լազերային տպիչ | | | | | | | | | | | | | | | | 1 592 280 | 176 920 |
| 3 | Սկաներ համակարգչի համար | | | | | | 117 400 | 10 000 | 127 400 | 25 480 | 152 880 | 87 120 | 11 880 | 99 000 | 19 800 | 118 800 | 139 590 | 15 510 |
| 4 | Տպիչ սարք, բազմաֆունկց իոնալ | | | | | | | | | | | | | | | | 625 950 | 69 550 |

| ...ԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ | | | «ՍԵԳ» ՍՊԸ | | | | | «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ | | | | | «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 8 154 825 | 1 630 965 | 9 785 790 | | | | | | | | | | | 7 938 000 | 1 134 000 | 9 072 000 | 1 814 400 | 10 886 400 |
| 1 769 200 | 353 840 | 2 123 040 | 4 208 000 | 240 000 | 4 448 000 | | 4 448 000 | 844 800 | 115 200 | 960 000 | 192 000 | 1 152 000 | 1 310 166,67 | 187 166,67 | 1 497 333,34 | 299 466,67 | 1 796 800 |
| 155 100 | 31 020 | 186 120 | 168 000 | 24 000 | 192 000 | | 192 000 | 126 000 | 14 000 | 140 000 | 28 000 | 168 000 | 150 791,67 | 21 541,67 | 172 333,34 | 34 466,67 | 206 800 |
| 695 500 | 139 100 | 834 600 | 1 096 000 | 32 000 | 1 128 000 | | 1 128 000 | 630 000 | 70 000 | 700 000 | 140 000 | 840 000 | 625 041,67 | 89 291,67 | 714 333,34 | 142 866,67 | 857 200 |

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. ապրիլի 29-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ Էդգար Մելքոնյան

Անդամներ՝ Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Կարեն Մելքոնյան

Արման Հարությունյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան